



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

«ՄԵՐ ՕՐԵՐԻ ԻՐԱԿԱՆ ՎԱՍԱԿԸ»

(Արտասահմանյան հայ մամուլի տեսություն)



յա խոսքը վերաբերում է Գրիգոր կարդինալ Աղաջանյանին: Բնութագիրը Բելյուսի «Արարատ» թերթինն է:

Արտասահմանյան առաջադիմական, ու հայրենասեր թերթերը լեցուն են Աղաջանյանի դավադրական գործունեության զգայացունց մերկացումներով, որոնք տալիս են ամբողջացված դիմանկարը Վատիկանի և Ուոլ-ստրիտի ծիրանավոր գործակալի:

Թյուրքիա, Ֆրանսիա և այլուր իր կատարած «հովվական» այցելություններից հետո, Աղաջանյանը նաև այցելեց Ամերիկայի Միացյալ Նահանգները: Շեշտելու համար իր այցելության «հովվական» բնույթը, իր մեկնելու նախօրյակին, Ֆրանսիայում մամուլի թղթակիցներին արած իր հայտարարության մեջ, կարդինալը ընդգծել է, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներն այցելելու իր նպատակն է մոլորության մեջ չռթմեցնել անջատված Հայաստանյայց եկեղեցին վերադարձնել կաթոլիկության ծոցը:

Նմանաբար մի հոդվածով «Լրաբեր»ը ցույց է տալիս Աղաջանյանի «հովվական» այցելության քաղաքական-դավադրական բնույթը, հիմնվելով Ֆրանսիայում նրա ունեցած գործունեության ծանր հետևանքների վրա:

«Հոս գալեն առաջ,— գրում է «Լրաբեր»ը,— կարդինալ Աղաջանյանը այցելեց Ֆրանսա. իր հոն երթալը տխուր անդրադարձում ունեցավ ֆրանսահայ գաղութի վրա»:

Ահա և «Լրաբեր»ում մատնանշված հետևանքները.—

ա) Հայաստանյայց եկեղեցու Ֆրանսիայի

թեմը Մայր Աթոռից անջատելու ջանքերը սաստկացան:

բ) Հոգաբարձությունները բռնի հրաժարեցնելու փորձեր արվեցին, որպեսզի նրանց տեղը անցնեն Մայր Աթոռի և Հայաստանի թշնամի տարրեր:

գ) Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյանը երկրից արտաքսման հրաման ստացավ:

դ) «Ազատ խոսք»ը խափանվեց, որովհետև շատագուցում էր խաղաղությունը, ծանոթացնում էր Սովետական Հայաստանի իրականությունը և ուզում էր պահել էջմիածնի հեղինակությունը:

ե) Քաջալերված հայերի դեմ ձեռնարկված ոստիկանական նոր գապիչ միջոցառումներից, արկածախնդիրները Ֆրանսիայում դարձան ավելի սանձարձակ և մոլեգին:

Մերկացնելով Սփյուռքում Հայաստանյայց եկեղեցին բռնի կաթոլիկացնելու փորձերը, թերթը գտնում է, որ Վատիկանը Ֆրանսիայում փորձում է կրկնել այն, ինչ որ տեղի ունեցավ «հոռ և բարեկեցիկ» հայ գաղութի նկատմամբ պապական կենտրոնում, ուր պետական կրոն ճանաչված Կաթոլիկական եկեղեցին բռնի ուժի միջոցով գրավեց հայկական եկեղեցիները, հարկադրեց հայ համայնքներին դավանափոխ լինել և արգելեց հայերեն լեզուն:

Աղաջանյանի Ամերիկա ժամանելու առթիվ, խորհրդածելով նրա անձի և նրա ներկայացրած հաստատության հետ կապված հարցերի շուրջ, «Լրաբեր»ը բացահայտում է այն ակնկալությունները, որոնք դրդեցին Վատիկանին կարդինալացնել Աղաջանյանին:

Այդ ակնկալություններից մեկն էր,— դրում է թերթը,— վնասել հայոց հայրենահավաքին: Կարդինալը արեց ամեն ինչ, արդարացնելու համար Վատիկանի ակնկալությունը, բայց արտասահմանի հայությունը շանսաց իր խորհրդին:

Վատիկանի մյուս ակնկալությունն էր իրեն հպատակեցնել Հայաստանյայց Եկեղեցին: Կարդինալացնելով հայրենադրուծ մի հայ հոգևորականի, Հռոմը հույս ուներ իրագործել իրենից միշտ խուսափող այդ նպատակը, օգտվելով ռազմատենչ մթնոլորտից:

Եվ արդարև Վատիկանը քիչ քան չի անում ռազմական այդ մթնոլորտն ստեղծելու և պատերազմական հիստերիա բորբոքելու ուղղությամբ:

Աղաջանյանն իր Ամերիկա այցելության ինչպիսի կրոնական նպատակներ էլ վերագրի, «Լրագրեր»ում, «Սուրիա»յում, «Արարատ»ում և արտասահմանյան այլ թերթերում հրատարակված նյութերը հանգում են այն բանին, որ նա Միացյալ Նահանգներն այցելեց իր տերերին հաշիվ տալու Միջին Արևելքում իր դատապարտելի գործունեության մասին, որի մեջ մտնում են նաև Հայաստանյայց Եկեղեցին պառակտելու նրա ջանքերը, և ստանալու նոր հրահանգներ:

Ինչի՞ է նման կարդինալ Աղաջանյանի «հովվական» այցելությունը, երբ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ուր հայ կաթոլիկական համայնքներ համարյա թե գոյություն չունեն, Աղաջանյանին անմիջապես շրջապատեցին դաշնակցական պրովակատորները: Հայաշատ կենտրոններում, դաշնակցականների օժանդակությամբ կազմակերպված ժողովներում, նա հանդես է եկել Հռոմեական Եկեղեցու ծոցը վերադառնալու կոչի զուգընթաց հակասովետական գրպարտիչ ելույթներով: Պատերազմական հիստերիա հրահրող այդ ելույթներով Աղաջանյանը փութացել է հավաստիացնել ամերիկյան իր տերերին, որ երրորդ համաշխարհային պատերազմ սանձազերծելու իրենց ջանքերի մեջ ամերիկա-անգլիական իմպերիալիստները կարող են վստահել իրեն:

Պատահական չէ, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներում Աղաջանյանի կատարած ամբողջ ուղևորությունը և ունեցած ելույթների ընթացքում, թմրկահարող մոմանտիկի դերում հանդես են եկել խոհարար Ջորջ Մարտիկյանը և ապագա ցանցած, բուլվարային գրող Վիլյամ Սարգսյանը: Գինովցած իրենց հրեշտային մտքերով, ռեակցիայի շփացած այդ զույգ քուրմերը չեն վարանած արտահայտելու իրենց անհամբերությունը պատե-

րազմը շղթայազերծված տեսնելու Սովետական Միության և Սովետական Հայաստանի դեմ, ինչպես նաև հայտնելու իրենց պատուհանային հայտնությունը լրտես-հետախուզական իրենց նվաստ սպասարկությունը տալու ամերիկա-թյուրքական զինյալ ուժերին:

Շրջապատելով Աղաջանյանին, դաշնակցականները նաև երազում էին նրա միջամրտությանը ճնշել առաջադիմական շարժումը ամերիկահայ գաղութում, թուլացնել հավատացյալների համախմբվածությունը Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի շուրջ: «Լրագրեր»ը օրն է ցնդեցնում հայ ժողովրդի և Մայր Աթոռի թշնամի տարրերի այդ ակնկալությունները: Բայց, նրանք, — ասում է «Լրագրեր»ը, — հուսախաբ պիտի լինեն, որովհետև նրանք «գիտնալու են, որ Ֆրանսայի մեջ տարված «հաղթանակը» խաբուսիկ և ժամանակավոր է»:

Ո՞վ է Գրեգոր կարդինալ Աղաջանյանը:

Նրա դավաճանական դիմանկարը տալիս է իր ընդհանուր գծերով Հալեբում հրատարակվող «Սուրիա» թերթը:

Սովետական Միության, Սովետական Հայաստանի և Միջին Արևելքի երկրների դեմ ուղղված ամերիկա-թյուրքական համընդհանուր պատերազմի պատրաստության մեջ, գրում է «Սուրիա»-ն, գործունե լինել են խաղաղ Վատիկանը և նրա հավատարիմ ներկայացուցիչներից կարդինալ Աղաջանյանը:

Մանկության հասակից, — գրում է թերթը, — Աղաջանյանը դատախարակվել է կրոնական աքեմի տակ թաքնված օտար գործակալների միջավայրում: Իր կյանքի երեք շրջորոշը նա անց է կացրել Հռոմի կաթոլիկական դպրոցներում և հաստատություններում և ռաբածած է պապեն ավելի պապական մը», և կանգ չի առել և չի առնի «կաթոլիկության տիեզերական փառքի համար» զոհելու «իր հայրենի հավատքը, Հայրենիքը ու ազգը»: Իրականության մեջ, Վատիկանն ու նրա կարդինալները «կաթոլիկության տիեզերական փառքին» ձգտում էին հասնել երեկ ֆաշիստ զավթիչների նվաճողական պատերազմներով, փակ ալսօր ձգտում են հասնել թակտերի ոլորդիական զանգստերների տիեզերական տիրապետության հետքերով:

Եվ, իրոք, Աղաջանյանը կարող է իրավամբ վստահությունը վարել ամերիկյան գաղտնի ոստիկանություն՝ որպես «ճմուռ», «միջին արևելյան մասնագետ գործակալ», որովհետև, — գրում է թերթը, — տարիներ շարունակ նա դասավանդել է Վատիկանի «Պրոպագանդաֆիտե» վարժարանում, որի կոչումն է պատրաստել դատախարակված և մասնագիտացված լրտեսներ:

Շարունակելով իր մերկացումները, գրում է «Սուրիան».

Պապի և Մուսուլինիի հանդեպ իր ունեցած հավատարմության համար Աղաջանյանը պատրիարք նշանակվեց Սիրիայի հայ կաթոլիկական համայնքին: Միաժամանակ Հռոմի ֆաշիստական կառավարության պահանջով է, որ Վատիկանը Աղաջանյանի անունը դրել էր ապագա կարդինալացուների ցանկի վրա, թեև դեպքերի բերումով, նա կարդինալ ձեռնադրվեց ամերիկյան իմպերիալիստների բարեհաճությամբ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Աղաջանյանը հուսախաբ չարեց Հռոմ-Բեռլին ֆաշիստական 'առանցքը: Պատրիարք Աղաջանյանը Հունաստանից Սիրիա և Լիբանան էր բերում երիտասարդ վաթուղիկներ, նպատակ ունենալով դուրսացնել այդ երկրների գրավումը գերմանա-իտալական բանակների կողմից: Պատերազմից հետո, ամերիկյան իմպերիալիստները, ինչպես պատերազմական քուլոր հանցագործներին, նույնպես էլ Աղաջանյանին ընդունեցին գրկաբաց: Աղաջանյանն ամերիկյան իմպերիալիզմին իր հավատարմության ուխտն արեց իր դասընկեր Նյու-Յորքի արքեպիսկոպոս — այժմ կարդինալ — Սպելմենի միջոցով, որ հանդիսանում է Ուոլ-ստրիտի դեսպանը Վատիկանի մոտ, և որ Սիրիա էր գնացել որպես պատրիարք Աղաջանյանի հյուրը:

Աղաջանյանի գործունեությունը, — ավելացնում է «Սուրիան», — չի սահմանափակվում նրա նենգամիտ լրտեսությամբը գաղութային իրականության: Աղաջանյանը նաև հանդես է գալիս Սիրիայի և Լիբանանի նկատմամբ «ամերիկյան պաշտպանության» ջատագովումով, նպատակ ունենալով այդ երկրները ներքաշել այսպես կոչված տխրահռչակ Միջերկրական թուղի և համաշխարհային երրորդ պատերազմի մեջ:

Ամերիկացիների հրահանգով էր, որ կարդինալ Աղաջանյանը գնաց Թյուրքիա, — գրում է «Սուրիան»: Իրականության մեջ այդ այցելության նպատակն էր, — ավելացնում է թերթը, — ամրապնդել Մերձավոր և Միջին Արևելքների նկատմամբ պապի և Տրոմենի հետապնդած քաղաքականությունը, որը ուղղված է այդ երկրամասերի ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի դեմ: Թյուրքիայում վատարած իր շրջափառությունը քողարկելով մեկտեղ «հովվական այցելության» ծխածածկություն, — արձանագրում է «Սուրիան», — իր ձանապարհորդության ընթացքում Աղաջանյանը հանդես է եկել թյուրքախառն և հակահայ զգայացունց

հայտարարություններով: Այս «հովվական» այցելությունը Աղաջանյանի դեմ է գրգռել մինչև անգամ Սիրիայի և Լիբանանի արաբ կաթոլիկների հանդեպի կարծիքը:

Աղաջանյանի գործունեության մեջ քիչ տեղ չէ, որ գրավում է «հերձվածող» հայերին Կաթոլիկ Նկեղեցու ծոցը վերադարձնելու գուր ջանքը: Ինչպիսի կրոնական ծխածածկություն էլ քողարկված լինի, այդ ջանքի նպատակն է, — բացահայտում է «Սուրիան», — Սիյուռեի հայությունը քաշել Վատիկանի փարափք և վերածել այն ապագա զայնացած, ազգուրաց, ազգային իրենալից և արժանապատվությունից զուրկ, վոսմապոլիտների մի ամբոխի: Այնուհետև գրում է «Սուրիան».

Կարդինալ Աղաջանյանն ու իր գործակիցներն ասում են. «Պետք է հնազանդվել պապին, պետք է զոհել գիտնեայ երկրային հայրենիքը, արժանանալու համար երկնային դրախտին»: Այդորինակ քաղաքական հանգում է պատերազմի կոշի ընդեմ Սովետական Միության և Սովետական Հայաստանի, որ հանդիսանում է բոլոր հայերի Մայր Հայրենիքը:

Եվ, արդարև, «Լրաբեր»-ի, «Սուրիա»-յի և «Արարատ»-ի էջերում հրատարակված Նյու-թերը ցույց են տալիս, որ Աղաջանյանն ու նրան թնող արգահատելի արկածախնդիրները հետապնդում են մեկ նպատակ, այն է Սիրիայում, Լիբանանում, Ֆրանսիայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում և այլուր ոստիկանական միջամտություններով խափանել պրոգրեսիվ շարժումներն ու հրատարակությունները, բռնադրավել ազգային հաստատություններն ու վարչական մեքենաները, Հայաստանյայց Սուրբ Նկեղեցին և նրա օրգանները և դրանք ծառայեցնել պատերազմի հրձիգներին: Աղաջանյանն ու նրա դաշնակցական փառաբանողները, այսպիսով, առանց դիմակների հանդես են գալիս՝ կոշ անելով գաղութների հայերին լծվելու ամերիկա-թյուրքական պատերազմական մեքենային, դավաճանելու իրենց ապրած երկրների ժողովուրդների դեմոկրատական ձգտումներին և ազգային-ազատագրական պայքարին, պառակտելու հայոց դարավոր Ազգային Նկեղեցին և պատերազմի դուրս գալու վերածնված հայ ժողովրդի և նրա ազատ ու ծաղկուն հայրենի երկրի դեմ:

Արտասահմանյան թերթերում հրատարակվող բազմաթիվ նյութերից պարզ երևում է, սակայն, որ ոչ Աղաջանյանին և ոչ էլ նրան շրջապատող ողորմելի ազգուրացներին չի հաջողվում ստիպել գաղութահայություն իր հոգեկան, կուլտուրական կապերը

խզել Սովետական Հայաստանի և Սուրբ Էջմիածնի հետ, հակառակ նրանց կիրառած ոստիկանական բիրտ միջամտությունների և տեղորոշողական գաղափարների: Փաստերը ավելի քան պերճախոս են:

Ֆրանսիայում, ուր Աղաջանյանի մատնության մեջ խափանվեց «Ազատ խոսք»-ը, վախեցնելու և լռեցնելու համար հայրենասեր մասնակցներին, Սովետական Հայաստանի 31-րդ տարեդարձի տոնակատարությունները ստացան ժողովրդական ուժեղ պոռթկումների բնույթ:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ուր Աղաջանյանը ժամանել էր 31-րդ տարեդարձի նախօրյակին, տոնակատարությունները հայաշատ կենտրոններում վերածվեցին համաժողովրդական աննախընթաց ցույցերի՝ ի պաշտպանություն Սովետական Հայաստանի:

Լիբանանում, ուր գտնվում է Աղաջանյանի կարգինայական աթոռը, ժողովուրդը նույնպես համարձակ ու մարտական հանդես է գալիս ի պաշտպանություն ցանկալի Սովետական Հայաստանի և խաղաղության: Ուշագրավ փաստ է, որ Լիբանանի հայ երիտասարդությունը, միացած իր արաբ եղբայրներին և քույրերին, անցյալ տարի իր պատգամավորներին ուղարկեց Բեռլին, մասնակցելու համար երիտասարդության խաղաղության համաշխարհային ֆեստիվալին:

Ոչ պակաս ուշագրավ իրողություն է, որ Փարիզում և Սան-Ֆրանցիսկոյում, հոգաբարձական բնորոշություններին, հակառակ ամեն կարգի պրոֆոկլադիաներին, հակաէջմիածնականները կրեցին ջախջախիչ պարտություն:

Հայ ժողովուրդը, — գրում է «Արաբեր»-ը վերոհիշյալ իրողությունների լույսի տակ, — պիտի գիտենա ետ մղել կարգինալ Աղաջանյանի մեղրածորան բառերի մեջ թաքնված ազգակործան թույլը, պիտի գիտենա պարտության մատնել պապականության նպատակները:

Մենք, հայերս, — գրում է Բեյրութի «Արարատ» թերթը, — պատճառ շունենք վախի ազդեցության տակ հրաժարվելու հայրենասիրությունից: Մենք սիրում ենք Սովետական Հայաստանը, որ աշխարհի բոլոր հայերի Մայր Հայրենիքն է: Հայրենասիրությունը հանցանք չէ:

«Միթե մեր օրերու իրական վասակ մը չէ՞» կարդինալ Աղաջանյանը, — եզրափակում է թերթը, — երբ կարդինալը կղավակցի այն թյուրբերուն հետ, որոնց գերագույն նպատակն է երկրի երեսեն արբել Հայաստանն ու հայ ժողովուրդը: Բայց ապագան վասակներուն չի պատկանիր: Ապագան կ'ապակալի խաղաղության ճակատին»:

Պատմության այդ դատավճռից խուսափում չկա ո'չ Աղաջանյանին և ո'չ էլ նրա ծիրանին նապափինող տականքներին: Անդունդը նրանց և Սփյուռքի հայության մայր զանգվածի միջև անկամրջելի է: Հայ ժողովրդի այդ եղկելի դավաճանները թյուրք դահիճների և Վատիկանի գործակալների հետ միասին պատերազմի հրձիգների միևնույն ճամբարումն են այն ժամանակ, երբ զաղութահայության մայր զանգվածը Մայր Աթոռի կողմն է, խաղաղության կողմը, Սովետական Միության և Սովետական Հայաստանի կողմը:

ԹՂԹԱԿԻՑ

